

տրոսն ալ ետևնէն գնաց : Ի՞ն ատեն վառած ջահերու լրւսով, որոնք այն նեղ խցին մէջ պայծառ լցո մը կը ծաւալէին, այն առաջին անգամ տեսաւ խեղջ գեղացին ալ այն մեծամեծ պատկերներն որոնք պատերն ու միջնորմները ծածկեր էին : Ո՞եծաւ մասամբ անհարթ կերպով քաշած ուրուագիծներ էին . բայց նկարին մէջ այնպիսի ազատութիւն մը, և զրից մէջ այնպիսի վեհ և ուժով կերպ մը կար, որ յայտնի կիմսցուեր վարպետ ձեռաց գործ ըլլալը : Վարսինոյի կոմու զարմացման ձայն մը հանելով, այդ հրաշալի նկարներուն զիմաց կանկ առած կեցաւ . որովհետեւ լաւ պատկեր ձանցող էր, և իր անքաւ հարստութեանցը մէկ մասը պատկերներու հաւաքում մը կազմելու ծախեր էր, որ իտալիոյ ամէնէն ձոխ հաւաքմունքներէն մէկը կը սեպուեր :

— Պիետրոս, ըսաւ կոմու գեղացիին, որ քովը կեցեր զարմացած պատերուն վրայի ուրուագիծ նկարները կը դիտէր, որչափ ատենէ ՚ի վեր և որ այս գանձիս տէր ես :

— Շիտակը ես ալ չեմ զիտեր, պարոն . վասն զի ես ալ հրամանքիդ պէս առաջին անգամն է որ այդ նկարները կը տեսնամ :

Վարսինոյի կոմու նորէն ուշադրութեամբ մը այն հրաշալի ուրուագիծներուն նայելով պոռաց .

— Ի՞նտարակոյս իտալիոյ մէջ ասանկ պատկեր նկարող մէկ պատկերահան մը կայ միայն, որ է Ալվադոր Առզան :

— Ի՞նքն ալ ասանկ կը կոչուեր, ըսաւ գեղացին քթին տակէն :

— Ի՞նչ ըսիր :

Պիետրոս չորս դին նայեցաւ, և տեսնալով որ հօն մինակ Պիետրին ու Վարսինոյի կոմու միայն կային, պատմեց անոնց քոլոր անցածը, Ո՞ազանիէլի կուսակից մը քովն ընդունիլը, և ան խցին մէջ փախստականին երկար ժամանակ քնակիլը . և երբոր լընցուց .

— Ալ տարակոյս չկայ, ըսաւ կոմու, այս նկարներն մեծին Ալվադորին են : Պիետրոս, ես պարտքերդ կը վճարեմ,

տունդ ալ կը գնեմ: Ի՞այց դուն շուտով ելիր գնա ասկէ . վասն զի եթէ իմանան որ դուն տունդ փախստական մը ընդուներ ես, գլխուդ մեծ փորձանք մը կը բերեն :

Ի՞յն իրիկունը Պիետրոս շատ մը ստակի տէր եղած, առաւ կնիկն ու պղտի առւրան և ուրախութեամբ դէպ 'ի Ո՞իլան տանող մեծ ձամբան բռնած սկսաւ առաջ երթալ:

ՍՈՒՎԵՍԴՐ

Սալվադոր Որզա :

Ալվադոր Առզա, անուանի պատկերահան և միանգամայն փորագրող, բանաստեղծ և երաժիշտը ծնաւ 1615ին Ուենելլա գեղը, Արքոլիի մօտիկ և մեռաւ 1673ին : Հայրը որ հասարակ արդաշափ մըն էր, առաւ զինքը Առմասգեան ըսուած կրօնաւոր հարց քով դրաւ որպէս զի փախստաբանութիւն սորվի: Ի՞այց ինքը կարգէ գուրս բերում մը զգալով նկարչութեան, իր Փրագանձանոյ անունով քրոջը երկանը քով աշակերտեցաւ : Տասնըետմը տարուան որբ և երեսի վրայ մնալով ապրուստը ձարելու համար՝ փաքրադիր ծովային, գիւղական և պատերազմական պատկերներ կը նկարէր և ոչինչ գնով փողոցներուն վրայ կը ծախէր : Ոմանք իր Ագար յանապատին և անոր նման ուրիշ նկարուցը կենդանութեանը վրայ հիացած՝ զինքը մեծապէս քաջալերելով խրախուսեցին, որով ինքն ալ վերջապէս գնաց Ծիփերայի նկարչութեան վարժոցը մտաւ : 1635ին Հռովմ գնաց, ու հօն ծանր հիւանդացաւ . վերջը դարձաւ նորէն Արքոլի եկաւ : Հօն քանի մը տարի կենալէն ետեւ ուրիշ առթով մը անկից մեկնեցաւ : Ո երջապէս Պիրանքաչիո կարգինալը զինքը Հռովմ կանչեց, և իր հետը Ալիդերապոյ տարաւ : Հօն Ալվադոր Առզա նկարեց իր գըլլուխ գործոցը, Սբոյն թոշնայի Փրէլին էուլը մատերը խոնելը . հօն Ի՞նտոն Ապադի

Երգիծաբան բանաստեղծին հետ ընկերանալով, իր տաղաչափութեան աշխոյժը վառեց : Ի՞այց ինչուան ան միջոցին դեռ համբաւը չէր ելած . ուստի ուզելով անուն հանել, 1639 տարւոյն բարեկենդանին Հռովմբ եկաւ և ինքնքը զուարձութեանց ու ծպտելով պըտլութելու տուաւ . քանի մը երգիծաբան իսազեր ալ շարագրեց և առանձին ընկերութեան մը թատրոնին մէջ ձեւացուց, և աս մասիս մէջ իր հանձարաբանութեամբը աւելի համբաւ ստացաւ քան թէ վրձինովը, որով ասոր վրայ իր երկասիրութիւնքն ալ աւելի յարդ ունեցան : 1646ին վերջերը նորէն դէպ՚ի՝ Արքովի Ճամբորդութիւն մը ըրաւ . 1647ին Ո՞ազանիէլի ապստամբութեանը նպաստեց, և երբոր Ապանիացիք յաղթեցին՝ թողուց Հռովմբ փախաւ : Ի՞այց քանի մը տարի անցյնելին ետեւ իր երգիծաբանութիւններէն գրգուուած թշնամիները՝ զինքը ստիպեցին որ Փլորենտիա երթայ, ուր Ո՞ետիշեան Յովհաննէս Լարոլոս կարդինալը իրեն լաւ ընդունելութիւն ըրաւ . հոն ինել մը ատեն կենալէն ետեւ, յետին անգամ մըն ալ Հռովմբգնաց իր կենաց վերջին տարիները : Ո՞ալվագոր Ո՞ազային կարիներն ոչ այնչափ յարդ ու անուն ունին իրենց բարեյարմար վայել չութեանն և Ճշգութեանը համար, որչափ գոյներուն կենդանութեանն և առոյցութեանը համար, ինչպէս նաև առարկայից Ճարտար գասաւորութեանը, ձեռքի եզական ազատութեանն, և ինելքէ դուրս ոգելից կենդանութեան կողմանէ նշանաւոր եղած են . կարգէ դուրս արագութեամբ կը նկարէր, և գերազանցեց պատերազմներ, աւազակաց տեսարաններ, ամայի և խոպան տեղեր նկարելու մէջ : Իր նկարուց մէջ նշանաւորներն են . Ի՞աղդին կուրօրէն բարիք բաշխելը, Յովհաննու առ Արքուեացիս քարոզութիւնը, Խնդորի վհկին Ո՞ամուէլի ստուերը կանչելը, Տուքիայի վիշապ ձուկն որսալը (երկու վերջինները Ո՞ովք են), Պիւթագորայ ստուերին իր աշակերտաց երևնալը, և

Կատիլինեայ ստուերին իր դաւակիցն երէն երգումինսղբելը : Ո՞ալվագոր իր պատկերներէն շատը ժանտանրով փորագրած է : Իսկ երգիծաբանութեանցը մէջ նշանաւորներն են, Ի՞աբելոն, Խըրաժշտութիւն, Ի՞աննաստեղծութիւն, Լիկարչութիւն, Պատերազմ և Ի՞ախանձ, որոնց մէջ անմշակ ոճոյն հետ նախատիպ անհարթութիւն մը կը տեսնուի, որ իր նկարուց ոգին կը յիշեցնէ . ունի նաև քանի մը երաժշտական երգեր ու արտադրութիւններ ալ :

Մեխիգոյ :

Ի՞ազմավիպիս նախընթաց թուոյն մէջ Ո՞իացեալ նահանգաց ընդհանուր հանգամանացը վրայ խօսած ըլլալով, կը մնայ հիմա Լիմերիկայի ուրիշ քանի մը տէրութեանց վրայ ալ խօսքերնիս դարձնել, որոնք Ո՞իացեալ նահանգներէն ետքը նշանաւոր են թէ իրենց ընդարձակութեամբը և թէ իրենց բնակչաց թուոյն բազմութեամբը :

Ուստի նախ և առաջ Ո՞եխիգոյի վրայ գալով՝ կը տեսնենք որ թէպէտ երկրին ընդհանուր տարածութիւնն է 200,000 քառակուսի փարսախ, սակայն համեմատութեամբ բնակիչը սակաւաթիւ է, վասն զի եթէ Լուրոպայի հետ բաղդատելու ըլլանք Ո՞եխիգոյ պէտք էր որ իր այնչափ ընդարձակ տարածութեան մէջ գոնէ 100 կամ 150 միլիոն բնակիչ ունենար, որ է ըսել Լուրոպայի բնակչաց թուոյն կէսը, մինչդեռ հիմայ հազիւ 8,000,000^b կը հանի . ուր Պաղղիա որ 26,720 քառակուսի փարս . է, 36,205,792 բնակիչ ունի :

Իսկ ընդհանուր Ո՞եխիգոյի երկրին հանգամանացը վրայ խօսելով շատ այնչափ բարեբեր չէ, պատճառաւ որ Ճահիճներ և անքեր ու աւազուտ տեղեր շատ կան : Ամանապէս բազմաթիւ ըշեր ունի, որոնց գլխաւորն է Չաբալա ըսուածը, որ 158 քառակուսի փարսախ է : Ո՞այրաքաղաքին մօտերը շատ մը